ԲԱՑՎԵՑ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՀՈՎԱՆՈՒ ՆԵՐՔՈ ԳՈՐԾՈՂ “ՇՈՂԱԿԱԹ” ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՄԱՍՆԱՇԵՆՔԸ

Սեպտեմբերի 26-ին Երևանում, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի բարձր նախագահությամբ տեղի ունեցավ “Շողակաթ” հեռուստաընկերության նոր մասնաշենքի պաշտոնական բացման հանդիսավոր արարողությունը: Նոր շենքը վերանորոգվել և բարեզարդվել է ազգային բարերարներ տեր և տիկին Վաչե և Թամար Մանուկյանների հովանավորությամբ:

Հանդիսությանը բացման խոսքով հանդես եկավ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Տեղեկատվական համակարգի տնօրեն Տ. Վահրամ քհն. Մելիքյանը՝ անդրադառնալով “Շողակաթ” հեռուստաընկերության անցած ուղուն, նպատակներին և ապագա ծրագրերին: Տեր Հայրն ուրախությամբ արձանագրեց, որ “Շողակաթի” բազում հոգևոր ծրագրեր արդեն իսկ սիրվել են մեր ժողովրդի կողմից և ընդգծեց Հայ Եկեղեցու քարոզչության գործում ժամանակակից տեխնիկական միջոցների օգտագործման կարևորությունը:

Այնուհետև Վեհափառ Հայրապետի հանդիսապետությամբ կատարվեց նոր շենքի օրհնության կարգ, որից հետո Նորին Սրբությունն իր պատգամն ուղղեց ներկաներին: Հայոց Հայրապետն իր գնահատանքը հայտնեց ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանին՝ շենքի ձեռքբերման գործում իր աջակցության համար, տեր և տիկին Վաչե և Թամար Մանուկյաններին, շինարարներին և “Շողակաթ” հեռուստաընկերության աշխատակիցներին՝ հույս հայտնելով, որ վերանորոգված այս շինության շնորհիվ “Շողակաթ” հեռուստաալիքն իր հաղորդումներով ու ծրագրերով միշտ սպասված ու սիրելի կլինի յուրաքանչյուր ընտանիքում:

“Գոհունակություն է Հայրապետիս համար հաստատել, որ “Շողակաթ” հեռուստաընկերությունը շուրջ մեկ տասնամյակ իր գովելի ավանդն է բերում մեր զավակաց քրիստոնեական դաստիարակությանը, հոգևոր, ազգային ու մշակութային կյանքի զորացմանը: Հեռուստաընկերության հաղորդումները մասամբ հասանելի են նաև Սփյուռքի մեր զավակներին Հանրային հեռուստատեսության Առաջին ալիքի միջոցով: Հեռուստաընկերության աշխատակիցները տարիների ընթացքին լուսաբանել ու մատչելիորեն ներկայացրել են Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու պատմությունը, սրբազան ծեսը, տոներն ու խորհուրդները, մեր հոգևոր մշակույթն ու հայրենավանդ արժեքները: Մեծ է “Շողակաթ” հեռուստաընկերության ծառայությունը մեր Եկեղեցու զավակաց սրտերում քրիստոնեական մեր սուրբ հավատքի զորացմանը և հոգևոր գիտելիքների ձեռքբերմանն ի նպաստ: Առավել կարևորվում է հեռուստաընկերության գործունեությունը, երբ մեր Եկեղեցին տակավին զգում է անհրաժեշտությունը բավարար թվով հոգևորականների”,- նշեց Հայոց Հայրապետը:

Ներկաներին իր սրտի խոսքն ուղղեց նաև ազգային բարերար տիար Վաչե Մանուկյանը: Նա ընդգծեց Հայ Եկեղեցու քարոզչության անհրաժեշտությունը յուրաքանչյուր հայ մարդու համար և հույս հայտնեց, որ հաջորդ տարի Վեհափառ Հայրապետի օրհնությամբ “Շողակաթ” հեռուստաընկերության հաղորդումները կսփռվեն նաև արբանյակային կապով՝ հնարավորություն ընձեռելով աշխարհասփյուռ հայությանը հաղորդ դառնալու Հայ Եկեղեցու և մեր Հայրենիքում տեղի ունեցող իրադարձություններին: Վաչե Մանուկյանը շեշտեց, որ քրիստոնեական դաստիարակությունը հատկապես կարևոր է մեր մատաղ սերնդի համար, ուստի իրենք ուրախ են, որ մասնակից են Մայր Աթոռի հովանու ներքո գործող հեռուստաընկերության աջակցմանը:

Այնուհետև ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանը և Վաչե Մանուկյանը հանդիսավոր կերպով կտրեցին մուտքի կարմիր ժապավենը: Ներկաները շրջեցին հեռուստաընկերության շենքում, ծանոթացան նոր շենքի պայմաններին և հնարավորություններին:

Հանդիսությանը մասնակցում էին բարձրաստիճան պետական այրեր, քաղաքային իշխանությունների ներկայացուցիչներ, Մայր Աթոռի միաբաններ, Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամներ, ՀԲԸՄ նախագահ Պերճ Սեդրակյանը, ազգային բարերարներ, Մյուռոնօրհնության առիթով Ս. Էջմիածին ժամանած քույր Եկեղեցիների ներկայացուցիչներ և բազմաթիվ հյուրեր:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ՀԱՆԴԻՍԱՊԵՏՈՒԹՅԱՄԲ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏ
ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆԸ ԵՎ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՐԵՐԱՐ ՎԱՅԵ ՄԱՆՈՒԿՅԱՆԸ
ԿՏՐՈՒՄ ԵՆ «ՇՈՂԱԿԱԹ» ՀԵՌՈՒՏԱԼԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄՈՒՏՔԻ ԺԱՊԱՎԵՆԸ